ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» 2017 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-320-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետով.

«**8.1) ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող կազմակերպություն**՝ Լիազոր մարմնի կողմից հավաստագրված և նրա հետ դրամաշնորհային պայմանագիր կնքած հասարակական կազմակերպություն, որն իրականացնում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց հետ ռեաբիլիտացիոն ծրագիր.»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Նախազգուշացում կիրառելու մասին պատճառաբանված որոշման պատճենը այն կայացրած ոստիկանության իրավասու ծառայողն ուղարկում է Լիազոր մարմին, որը երեք աշխատանքային օրվա ընթացքում այն փոխանցում է իր հետ դրամաշնորհային պայմանագիր կնքած՝ ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող հասարակական կազմակերպությանը: Վերջինս այն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին առաջարկում է ռեաբիլիտացիոն ծրագրով նախատեսված ծառայությունները՝ բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Ոստիկանության իրավասու ծառայողը նախազգուշացում կիրառելու մասին պատճառաբանված որոշումն ընդունելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում,

որոշման մեջ առկա տեղեկությունները Կառավարության որոշմամբ սահմանված կարգով մուտքագրում է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված համակարգ և մուտքագրման օրը համակարգով ծանուցում է ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությանը: Ծանուցումը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությունը ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին առաջարկում է ռեաբիլիտացիոն ծրագրով նախատեսված ծառայությունները՝ բռնության կրկնակի դրսևորումները կանխարգելելու նպատակով:»:

Հոդված 4. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին մասով.

«12.1. Անհետաձգելի միջամտության որոշման պատճենը այն կայացրած ոստիկանության իրավասու ծառայողն ուղարկում է Լիազոր մարմին, որը երեք աշխատանքային օրվա ընթացքում այն փոխանցում է իր հետ դրամաշնորհային պայմանագիր կնքած՝ ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող հասարակական կազմակերպությանը: Վերջինս այն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին առաջարկում է ռեաբիլիտացիոն ծրագրով նախատեսված ծառայությունները՝ բռնության նոր դրսևորումները կանխարգելելու նպատակով:»:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.2-րդ մասով.

«12.2. Ոստիկանության իրավասու ծառայողն անհետաձգելի միջամտության որոշումն ընդունելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեջ առկա տեղեկությունները Կառավարության որոշմամբ սահմանված կարգով մուտքագրում է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված համակարգ և մուտքագրման օրը համակարգով ծանուցում է ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությանը: Ծանուցումը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությունը ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին առաջարկում է ռեաբիլիտացիոն ծրագրով նախատեսված ծառայությունները՝ բռնության կրկնակի դրսևորումները կանխարգելելու նպատակով:»:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) իրականացնում է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում~~ և սոցիալական դեպքի վարման շրջանակում օգտագործում է անհրաժեշտ տեղեկությունները~~՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով՝ ընդգրկելով ինչպես ոստիկանության, քննչական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի, այնպես էլ վերջիններիս չգրանցած՝ աջակցության կենտրոնների և ապաստարանների, ռեաբիլիտացիոն ծրագիր իրականացնող կազմակերպությունների տրամադրած տվյալները, դրանց ընթացքի վերաբերյալ վիճակագրության վարում, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում.»:

Հոդված ~~8~~7. Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 3.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.1) սոցիալական դեպքի վարման շրջանակում օգտագործում է ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերում ներգրավված անձանց՝ բռնության ենթարկված անձի, բռնություն գործադրած անձի և բռնության ականատեսի վերաբերյալ ընտանեկան և կենցաղային բռնության հաշվառման համակարգում առկա տվյալները, որոնք ներառում են նրանց բնակության վայրի, աշխատանքի և կրթության վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև առողջական վիճակի վերաբերյալ տվյալները՝ այդ թվում հաշմանդամության կամ հոգեկան առողջության խնդիրների առկայությունը, ալկոհոլից, թմրամիջոցներից, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերից, թունանյութերից կամ դեղանյութերից կախվածությունը, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված լինելու հանգամանքը, ընտանեկան և կենցաղային բռնության տեսակը և գործադրման վայրը, բռնությունը հայտնաբերող կամ ահազանգող անձի և բռնության ենթարկված անձի կամ բռնություն գործադրած անձի հետ նրա ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ տեղեկությունները՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով.»:

Հոդված ~~7~~8.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի., 3-րդ, 5-րդ, ~~և~~ 6-րդ և 7-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հուլիսի 1-ից:

2. 2027 թվականի հուլիսի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8.1-ին կետը, 6-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ հոդվածի 12.1-ին մասերը:

3. Սույն օրենքի իրականացումն ապահովող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունները կատարվում են մինչև 2027 թվականի հուլիսի 1-ը: